

Է. Պոյի արձակի ֆրանսերեն թարգմանությունների առանձնահատկությունները

Հողվածը նվիրված է ամերիկացի անվանի ռոմանտիկ գրող՝ Էդգար Պոյի արձակ ստեղծագործությունների ֆրանսերեն թարգմանությունների առանձնահատկությունների քննությանը: Ֆրանսիական գրական աշխարհին հայտնի թարգմանիչներ Ամետ Պիշոն, Էմիլ Ֆորգր, Բգաբել Մենյեն, Ալֆոնս Բորգերը իրենց առջև նպատակ էին դրել ծանոթացնել ֆրանսիացիներին Պոյի հանճարի հետ: Այդ թարգմանությունների առանձնահատկությունները կայանում էին նրանում, որ դրանցում տեղ էին գտնում սյուժեի իմաստային փոփոխություններ, հավելումներ կամ կրճատումներ, հարմարեցումներ ֆրանսիացիների մենտալիտետի և տեղային կոլորիտի հետ: Չնայած այդ ամենին, նրանք կատարեցին մեծ առաքելություն, ճանապարհ հարթելով Բողլերի թարգմանությունների, իսկ դրանց միջոցով՝ Պոյի համաշխարհային ճանաչման համար:

Բանալի բառեր. «Ֆրանսիական» Պո, Կ. Լեմոնյե, պոետական սկզբունք, թարգմանություններ, մեկնաբանություններ:

Ամերիկացի մեծանուն ռոմանտիկ գրող Էդգար Պոն լայն ճանաչում գտավ Եվրոպայում և ողջ աշխարհում 19-րդ դարի ֆրանսիացի թարգմանիչների, գրողների և քննադատների շնորհիվ:

Պոյի կերպարի «ստեղծման» և զարգացման գործընթացում առանձնակի դեր են խաղում հեղինակի իմպլիցիտ դրսևորումները իր ստեղծագործությունների տեքստում: Դրանք ինտրիգի դեր էին խաղում ընթերցողների համար, ստիպելով նրանց մտածել այն անհատի մասին, ով գրել է այս ստեղծագործությունները:

Ֆրանսիացի պոետները իրենց համար հայտնագործեցին Պոյին՝ որպես կերտող հեղինակի, ում գեղագիտական սկզբունքները առավել հոգեհարազատ են իրենց:

Էդգար Պոյի՝ ֆրասերենով առաջին թարգմանությունների շրջանը՝ 1845-1857 թվականներն են: Այդ նույն շրջանում են ստեղծվում նաև առաջին քննադատական գործերը նրա մասին: Այդ շրջանին բնորոշ է հեղինակի գրական և տեսական գործերի տարածումը, զանգվածայնացումը: Անվանի գրականագետ ու թարգմանիչ Լ.Լեմոնյեն իր ուսումնասիրության մեջ նշում է, որ «ֆրանսիական Պոյի» ստեղծման պատմությունը ուսումնասիրելու համար անհրաժեշտ է սկսել նրա գործերի թարգմանություններից:

Թարգմանությունները Լեմոնյեն պայմանականորեն բաժանում է երկու շրջանի՝ պատմվածքների թարգմանություններ և պոեզիայի թարգմանություններ: Եթե առաջինում գերիշխում է Բողլերը, ապա երկրորդում՝ Մալարմեն:

Սակայն այստեղ պետք է մի վերապահում անել, քանի որ այս գործում կարևոր նշանակություն են ունեցել նաև այն թարգմանությունները, որոնք կատարվել են Բողլերից և Մալարմեից առաջ և որոնք աչքի են ընկնում մակերեսային ընկալումով, իսկ հաճախ նաև իմաստային տրանսֆորմացիայով: Դրան համապատասխան՝ մակերեսային էր և ոչ այնքան հասուն նաև քննադատությունը: Այս առումով աչքի է ընկնում ֆրանսերեն լեզվով առաջին թարգմանությունը, որը ստեղծվել է դեռևս Պոլի կյանքի օրոք. 1845 թվականի նոյեմբերին Ամետ Պիշոն թարգմանում է Պոլի «Ոսկե բզեզը»: Իսկ հաջորդ տարի լույս է տեսնում «Սպանություն Մորգ փողոցում» ստեղծագործության ֆրանսերեն ազատ վերապատմումը: Մի կողմից, կարելի էր անտեսել այս թարգմանությունները՝ նրանց անկատար լինելու պատճառով, սակայն դա կլիներ բացթողում, քանի որ մինչբողլերյան այդ թարգմանությունները ուղղակի թե անուղղակի կերպով ազդել են նաև Բողլերի վրա:

«Սպանություն Մորգ փողոցում» ստեղծագործության թարգմանության սկզբնամասի հետևյալ տողերը արդեն վկայում են այդ թարգմանության «ազատ ոճի» մասին.

This morning, about three o'clock, the inhabitants of the Quartier Saint-Roch were aroused from the fourth sleep by a succession of terrific shrieks issuing apparently from the fourth story of a house in the Rue Morgue, known to be in the sole occupancy of one Madame L'Espanaye and her daughter, Mademoiselle L'Espanaye.

«Այս առավոտ, ժամը երեքին մոտ, Մեն Ռոք թաղամասի բնակիչները քնից արթնացան՝ Մորգ փողոցի չորրորդ հարկից եկող սարսափելի ճիչերից, մի բնակարանից, որի միակ բնակիչները մադամ Լ'Էսպանեն և նրա դուստր՝ օրինորդ Լ'Էսպանեն են»:

Dans la nuit du 9 au 10 juillet, une maison, rue de l'Ouest N°... a été le théâtre d'un inexplicable attentat. Entre minuit et une heure, on a entendu des cris violents et qui partaient du 2^e étage de cette maison ; ces clameurs ont effrayé quelques ouvriers qui passaient dans la rue ; ils ont frappé, réveillé le portier qui était endormis, et tout ensemble ont monté les escaliers. Ce deuxième étage était occupé par Madame Duparc.

«Հուլիսի 9-ից՝ լույս 10-ի գիշերը Լ'Ուեսթ փողոցի թիվ ...տունը դարձավ անբացատրելի մի հարձակման թատերաբեմ: Կեսգիշերի և գիշերվա մեկի միջև լավեցին սարսափելի ճիչեր, որոնք գալիս էին տան երրորդ հարկից և որոնք վախեցրեցին փողոցով անցնող բանվորներին: Նրանք թակեցին շենքի դուռը, արթնացրեցին դռնապանին, որն արդեն քնած էր, և բռնորդ միասին բարձրացան աստիճաններով: Այդ երրորդ հարկը զբաղեցնում էր մադամ Դյուպարկը՝ ռազմական նախարարության նախկին ծառայողի այրին, ով ապրում էր այստեղ իր դստեր՝ Պոլին Դյուպարկի հետ»:

Թարգմանության տեքստից երևում է, որ փոփոխված են անունները, փողոցի անվանումը, հարկը, ավելացված են մի շարք մանրամասնություններ, որոնց շնորհիվ տեքստը դառնում է ավելի գունեղ ու գրավիչ՝ ի համեմատու-

թյուն բնագրի «չոր արձանագրության» հետ, որը ավելի շուտ քրեական արձանագրություն է հիշեցնում:

Պոյի հանդեպ հետաքրքրությունը «տեղայնացնելու» նպատակով որոշ թարգմանիչներ ավելացնում էին փարիզյան կոլորիտ, փոխում սեփական անունները, ավելացնում էին այնպիսի դետալներ, որոնք կոչված էին ավելի «իրատեսական» դարձնել այս կամ այն պատմվածքը: Այս առումով աչքի է ընկնում ֆրանսիացի թարգմանիչ Էմիլ Ֆորգր, ով, իր թարգմանություններում դառնում է, փաստորեն, Պոյի համահեղինակը: Բավական է համեմատել Էդգար Պոյի բնագրի հեռկյալ տողերը՝ Ֆորգի թարգմանության հետ.

«For some minutes, the old man seemed too much exhausted to speak».

«Մի քանի րոպեների ընթացքում ծերուկը չափազանց հյուծված էր թվում խոսելու համար»¹:

Էմիլ Ֆորգի թարգմանությունում կարդում ենք.

Le vieux pêcheur, essoufflé, resta deux minutes sans pouvoir émettre une parole : il semblait humilié de sa fatigue.

«Ծեր ձկնորսը, շնչակտուր, երկու րոպե չէր կարող արտասանել ոչ մի բառ. նա, կարծես, ստորացված էր իր հոգնածությամբ»:

Լեմոնյեն այդ առիթով գրում է. «Ֆորգը մոռացել է, որ թարգմանիչը՝ համահեղինակ չէ, նա ձևափոխում և գունազարդում է տեքստը իր հաճույքով»:²

¹ Poe, E.A. The Collected Tales and Poems. — Hertfordshire: Wordsworth Editions, 2004. —p. 106

Ֆորգի թարգմանությունների մեջ ակնհայտ է իմպրեսիոնիզմի հմայքը : Նա պահպանում է բնագրի տառը, միևնույն ժամանակ ավելացնելով որոշ գծեր, հոգեբանական տարրեր, որոնք սակայն հաճախ ստվերում են Պոլի գաղափարը: 1846 թվականի հոկտեմբերին Ֆորգը հրատարակում է Ֆրանսիայում Պոլին նվիրված առաջին հոդվածը: Առաջին անգամ ֆրանսիացի ընթերցողը ծանոթանում է ամերիկացի գրողի հետ, որին Ֆորգը անվանում է ոչ միայն «հռչակավոր գրող», այլև «քննադատության արքայազն»:

Պոլի անունը ավելի հաճախ սկսեց երևալ տարբեր գրական հանդեսներում նաև երբ 1847-48 թվականներին Փարիզի հայտնի թերթերից մեկում սկսեցին լույս տեսնել Իզաբել Մենյեի թարգմանած՝ Էդգար Պոլի հինգ պատմվածքները. «Սպանություն Մորգ փողոցում», «Սև կատուն», «Էրոսի և Ունայի գրույցը», «Ոսկե բզեզը », «Գահավիժումը Մալստրեմ>: Մակայն աչքի է զարնում այն փաստը, որ Մենյեն չի ընդունում Պոլի հոգեբանական դոկտրինը և իր ներածական խոսքում բերում այդ ժխտողականության փաստարկները: Սրա հետ է կապված նաև Մենյեի թարգմանությունների յուրահատկությունները. ի հակադրություն Ֆորգի, Մենյեի թարգմանություններում նկատվում են ոչ թե «լրացումներ», «գունազարդումներ», այլ հակառակը՝ կրճատումներ, միտումնավոր բացթողումներ: Այսպես, «Սպանություն Մորգ փողոցում» պատմվածքի ենթավերնագրի

² Lemonnier L. Les Traducteurs d'Edgar Poe en France de 1845 a 1875: Charles Baudelaire. — Paris: Presses. Universitaires de France, 1928. —P-25.

թարգմանությունն արդեն վկայում է Մենյեի ոճի մասին:
Գրեթե երեք տողից բաղկացած այդ ենթավերնագիրը՝

«Monsieur Auguste C. Dupin...the little family history, which he detailed to me with all that candor which a Frenchman indulges whenever mere self is the theme»³ –

/»Պարոն Օգյուստ Մ.Դյուպեն... փոքրիկ ընտանեկան պատմություն, որը նա ինձ ներկայացրեց մանրամասնություններով և այնպիսի անկեղծությամբ, որին հակված են լինում ֆրանսիացիները, երբ գործը վերաբերում է անձամբ նրանց»:/ թարգմանչի մոտ ներկայացվում է ընդամենը հինգ բառով.

«Monsieur Auguste Dupin. ...L'histoire de sa famille» [149: 43] /
«Месть Огюст Дюпэн.»⁴ –

/Պարոն Օգյուստ Դյուպեն... իր ընտանիքի պատմությունը:/

Իզաբել Մենյեն միտումնավոր բաց էր թողնում բոլոր այն մանրամասները և դետալները, որոնք, ըստ նրա, չէին համապատասխանում ֆրանսիական մենտալիտետին կամ ֆրանսիական իրույթներին: Նա հաճախ կրճատում է այն

³ Poe, E.A. The Collected Tales and Poems. — Hertfordshire: Wordsworth Editions, 2004. — p. 4

⁴ Lemonnier L. Les Traducteurs d'Edgar Poe en France de 1845 a 1875: Charles Baudelaire. — Paris: Presses. Universitaires de France, 1928. —P 43.

դարձվածքները և անգամ նախադասությունները, որոնք, նրա կարծիքով, ավելորդ են: Սակայն արդյունքում ստացվում է այնպես, որ թարգմանության մեջ չի արտացոլվում այս կամ այն պատմվածքի խորությունը, հոգեբանական նրբությունը: Մենյեն հիմնականում պահպանում է սյուժետային գիծը, վերածելով ստեղծագործությունը պարզ սխեմայի:

Գրքի տեսքով Պոյի թարգմանությունները առաջին անգամ լույս են տեսնում 1853 թվականին, երբ Ալֆոնս Բորգերը հրատարակում է «Էդգար Պոյի ընտրանին»: Բորգերը՝ որպես թարգմանիչ, հիմնական շեշտը դնում է ամերիկացի գրողի նրբագեղ ոճի և էլեգանտության վրա: Սակայն երկրորդ պլան է մղվում թարգմանության ճշգրտությունը: Որոշ քննադատներ նշում են, որ թարգմանությունը ավելի էլեգանտ է, քան մոդելը:⁵ Շարունակելով նախորդ թարգմանիչների փորձը, Բորգերը ձգտում է հստակության, սակայն դա արվում է այնպես, որ ընթերցողին տեղ չի մնում երևակայության համար: Դա ակնհայտ է, օրինակ, «Ոսկե բզեզը» պատմվածքում, Պոյի բնագրի հետևյալ հատվածը՝

«I had become most uncountably interested — nay, even excited: Perhaps there' was something about the extravagant demeanor of Legrand — some air of forethought, or of deliberation, which impressed me. I dug eagerly and now and?

⁵ Lemonnier L. Les Traducteurs d'Edgar Poe en France de 1845 a 1875: Charles Baudelaire. — Paris: Presses. Universitaires de France, 1928. -P- 60.

then caught myself actually looking, with something that very much resembled expectation; for the fancied treasure, the vision of which had demented my infertumete companion».⁶

«Ինչ-որ անհասկանալի կերպով ինձ մոտ հետաքրքրություն առջացավ – ոչ, ես անգամ հուզված էի: Լեզրանի արտառոց պահվածքի մեջ թափանցում էր ինչ-որ մի կանխամտածվածության կամ խորհրդածության զգացում, որը ազդեց ինձ վրա: Շարունակելով ժրաջան փորել, ես ինձ մի քանի անգամ բռնացրի այն մտքի վրա, որ ինքս էլ եմ ուշադրությամբ նայում այդ փոսին, կարծես փնտրում եմ դրա հատակին այն զարմանահնար գանձը, որի մասին միտքն իսկ իսելացնոր էր դարձրել իմ իսեղճ ընկերոջը», թարգմանվել է Բորգերի կողմից հետևյալ կերպ.

«Je prenais maintenant au résultat de cette bizarre enterprise un étrange intérêt, et je partageais même jusqu'à un certain point l'exaltation de mon ami. Peut-être y avait-il, au milieu de toutes les extravagances de ce dernier, un air d'assurance réfléchie, je ne sais quoi qui m'intéressait malgré moi. Je creusai donc avec ardeur, et plus d'une fois, je me surpris cherchant, avec quelque chose qui ressemblait singulièrement à l'attente, ce trésor

⁶ Poe, E.A. The Collected Tales and Poems. — Hertfordshire: Wordsworth Editions, 2004. —p. 79.

supposé, dont la prévision avait troublé la cervelle de mon infortuné compagnon.»⁷ -

«Այժմ ես տարօրինակ հետաքրքրություն էի ապրում այդ զարմանալի նախաձեռնության հանդեպ և անգամ որոշ չափով կիսում էի իմ ընկերոջ հիացմունքը: Միգուցե, չնայած իր պահվածքի էքստրավագանտությանը, նա ուներ կենտրոնացված վճռականության տեսք և ևս ինչ որ մի անհասկանալի բան, որը հետաքրքրեց ինձ՝ հակառակ իմ կամքին: Այսպիսով ես ջերմեռանդ փորում էի և բազմիցս զարմանում ինքս ինձ վրա, երբ սկսում էի հանկարծ փնտրել բուն առարկայի նման ինչ-որ բան, այդ ենթադրյալ գանձը, որի կանխատեսումը պղտորել էր իմ դժբախտ ուղեկցի գիտակցությունը»:

Ակնհայտ է, որ Բորգերի թարգմանությունը իրոք շատ էլեգանտ է և նրբաճաշակ: Իր զգուշավոր և մեղմ ոճով, ինչպես նաև արտահայտությունների միտումնավոր անորոշությամբ թարգմանիչը ստեղծում է երազկոտ հերոսի պատկեր, հարթելով գործողության լարվածությունը, որն առկա է անգլերեն բնագրում: Պոյի պատմվածքը, որը սարսափեցնում է ընթերցողին իր լարվածությամբ և իր առեղծվածայնությամբ, Բորգերի մոտ փոխակերպվում է հերոսի՝

⁷ Lemonnier L. Les Traducteurs d'Edgar Poe en France de 1845 a 1875: Charles Baudelaire. — Paris: Presses. Universitaires de France, 1928. —P-60.

ինչպես սեփական զգացումների, այնպես էլ ընկերոջ պահվածքի ներքին արտացոլման:

Այսպիսով ակնհայտ է դառնում, որ Պոյի արձակ ստեղծագործությունների ֆրանսերեն թարգմանություններում, որոնք արվել են Բողլերից առաջ, գերիշխել է «ազատ» մոտեցումը թարգմանվող նյութի նկատմամբ. սկսած այուժեի իմաստային փոփոխություններից, հավելումներից ու հակառակը, կրճատումներից, տեղային կոլորիտ հաղորդումից՝ մինչև դրա ազատ վերապատմումը: Նշված թարգմանիչների հիմնական նպատակը առաջին հերթին եղել է ծանոթացնել ֆրանսիացի ընթերցողներին ամերիկացի գրողի ուրույն գեղարվեստական աշխարհի, նրա ստեղծած նոր գրական ժանրերի՝ դեդեկտիվ վեպի և սարսափի վեպի հետ: Դա է պատճառը, որ չնայած Պոյի արձակ գործերի այդ ազատ ինտերպրետացիային, այդ թարգմանիչները կատարեցին շատ կարևոր գործ. ծանոթացնելով ֆրանսիացիներին հանճարեղ գրողի ստեղծագործության հետ, նրանք միննույն ժամանակ ճանապարհ հարթեցին Բողլերի համար, ում՝ դասական դարձած թարգմանությունները Պոյին բերեցին ոչ միայն եվրոպական, այլև համաշխարհային համբավ:

Գրականության ցանկ

1. Poe, E.A. The Collected Tales and Poems. — Hertfordshire: Wordsworth Editions, 2004. —p. 106
2. Lemonnier L. Les Traducteurs d'Edgar Poe en France de 1845 a 1875: Charles Baudelaire. — Paris: Presses. Universitaires de France, 1928. —P- 25
3. Poe, E.A. The Collected Tales and Poems. — Hertfordshire: Wordsworth Editions, 2004. —p. 4
4. Lemonnier L. Les Traducteurs d'Edgar Poe en France de 1845 a 1875: Charles Baudelaire. — Paris: Presses. Universitaires de France, 1928. —P- 43
5. Lemonnier L. Les Traducteurs d'Edgar Poe en France de 1845 a 1875: Charles Baudelaire. — Paris: Presses. Universitaires de France, 1928. -P- 60
6. Poe, E.A. The Collected Tales and Poems. — Hertfordshire: Wordsworth Editions, 2004. —p. 79
7. Lemonnier L. Les Traducteurs d'Edgar Poe en France de 1845 a 1875: Charles Baudelaire. — Paris: Presses. Universitaires de France, 1928. —P-60

**The Peculiarities of French Translations of
E.Poe's Prose works**

The article analyses the peculiarities of the French translations of prose works of a distinguished American romantic writer Edgar Allan Poe. Known in French literary circles translators Amet Pichot, Emil Forg, Isabelle Meunier, Alphonse Borger intended to familiarize a French reader with the genius of Poe. The main features of these translations are the meaning changes of the plot, additions and reductions, adjustments to French mentality and local colour. Despite this, they fulfilled a great mission, not only opening a unique art world of the American writer for the French readers, but also paving a way for the translations of Baudelaire, and through them – to the worldwide fame of Edgar Allan Poe.

Key words: «French» Poe, L. Lemmonier, poetic principle, translations, comments

Особенности французского перевода прозы Э.По

Статья посвящена анализу особенностей французских переводов прозаических произведений известного американского романтического писателя Эдгара По. Известные во французских литературных кругах переводчики Амет Пишо, Эмиль Форг, Изабел Менье, Альфонс Боргер имели своей целью ознакомить французского читателя с гением Эдгаром По. Основные особенности этих переводов заключаются в том, что в них имеют место смысловые изменения сюжета, дополнения к содержанию произведений или его сокращения, придача местного колорита и приспособление к французскому менталитету. Несмотря на это, они выполнили большую миссию, не только “открыв” для французов уникальный художественный мир американского писателя, но и проложив дорогу переводам Бодлера, а через них – к всемирной славе Эдгара По.

Ключевые слова: «французский» По, Л.Лемонье, поэтические принципы, переводы, интерпретации